

ՔՆԱՐԻԿ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ԹՈՎԱՄԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԵՏՔԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Հայ միջնադարյան թարգմանական արձակուն բավական պատկառելի տեղ են գրավում Հին և Նոր Կտակարանների պարականոն կամ անկանոն գրքերը: V դարում և հետագայում հայերեն թարգմանված այդ երկերը առաջին անգամ միջազգային ճանաչում ստացան XIX դարի վերջերին, հատկապես Մկրտիչ Էմինի կողմից հավաքված, ապա և ռուսերեն թարգմանված պարականոնների¹, նաև հենց Էմինի հիշատակին նվիրված մխիթարյանների «Թանգարան հայոց հին և նոր դպրութեանց» երեք հատորների շնորհիվ, որոնք լույս տեսան 1896, 1897 և 1904 թվականներին²:

Այս վերջիններում ներկայացվեց ձեռագրերում պահպանված պարականոնների հարուստ ժառանգությունը, ինչը և սկիզբ դրեց նրանց գիտական ուսումնասիրությանը:

Մի առանձին ճյուղ է կազմում այդ ուսումնասիրությունների շարքում պարականոնների ազդեցության հարցը հայ միջնադարյան գրականության վրա, ինչպես և նրանցից ժողովրդական ստեղծագործություն անցած առանձին փոքրիկ գրույցների, ավանդույթների տեղայնացման հարցը: Այդ բնագավառում ուշադրության է արժանի Ա. Ղանալանյանի կատարած աշխատանքը: Տարբեր ձեռագրերից և հրատարակություններից նա հավաքեց Հին և Նոր Կտակարանային պարականոն գրույցները: Դասելով դրանք եկամուտ գրույցների շարքը, նա միաժամանակ նշեց, որ հայկական պարականոն ավանդությունների մեջ կան և այնպիսիք, որոնց զուգահեռները բացակայում են մեզ հայտնի տպագիր և ձեռագիր պարականոն գրքերի մեջ³:

Հայտնի է, որ տարբեր աղանդավորական շարժումների դեմ մղված պայքարում ոչնչացվել է նաև նրանց գաղափարախոսությունն արտահայտող

¹ Տե՛ս Эмин Н. О., "К вопросу о собрании армянских апокрифов", հետևյալ հրատ. մեջ. "Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе". Москва, 1897, с. 336-338, նույն տեղում տե՛ս հայկական պարականոնների ցուցակը. "Список армянских апокрифов, составленный по каталогу рукописей Эчмиадзинской библиотеки, изданному в 1863 году в Тифлисе", էջ 339-344:

² Տե՛ս 1. Թանգարան հին և նոր նախնեաց. Ա.- Անկանոն գիրք Հին Կտակարանաց. Հրատարակիչ՝ Սարգիս Հովսեփյան: Վենետիկ, 1896: 2. Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց. Բ.- Անկանոն գիրք Նոր Կտակարանաց: Հրատարակիչ՝ Եսայի Տայեցի: Վենետիկ, 1897: 3. Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց. Գ.- Անկանոն գիրք առաքելականք: Հրատարակիչ՝ Քեր. Չրաքյան: Վենետիկ, 1904:

³ Տե՛ս Ղանալանյան Ա., Ավանդապատում: Երևան, 1969: Առաջաբան, էջ 629-67:

գրականությունը, այդ թվում և պարականոնների մեծ մասը⁴: Սակայն անժխտելի է նաև այն փաստը, որ այդ գրականությունը, մասնավորապես պարականոն երկերը, հայ հասարակության որոշ շրջաններում գործածության մեջ են եղել և, անշուշտ, պետք է որ ազդեցություն թողած լինեին հայ միջնադարյան գրականության վրա: Դա հատկապես վերաբերում էր ժողովրդական ակունքներ ունեցող, լայն զանգվածների ճաշակին և պատկերացումներին հարազատ վիպական արձակին, զրուցատիպ գրականությանը: Այդ կարգի գրականություն էր նաև ժողովրդի կողմից շատ սիրված Մարիամ Աստվածածնին և Հիսուսին վերաբերող պարականոն ավետարանական զրույցները:

Սամվել Անեցու, Մխիթար Այրիվանեցու ցուցակներում, ապա Սարգիս Շնորհալու երկերում հիշատակվում են երկու նոր-ավետարանական պարականոններ, որոնք 591 թվականից առաջ Հայաստան բերվեցին նեստորականների կողմից և թարգմանվեցին հայերեն: Անեցին նշում է. «Աստուածածնի պատմութիւն»-ը և «Մանկութիւն Տեառն» երկերը, Մխիթար Այրիվանեցին և Սարգիս Շնորհալին՝ «Մանկութիւն Տեառն» և «Աւետարան Թովմայի» երկերը⁵: Ասել է, հայ մատենագիրների կողմից վկայված պարականոնները պատկանում են այն գրականությանը, որը գիտական շրջանակներում ստացել է մի ընդհանուր անվանում՝ «Տղայութեան Աւետարան» (Paidika)⁶: Բազմաթիվ այդ տիպի Ավետարանների մեջ առավել արժեքավոր են համարվում հունարեն, ասորերեն, լատիներեն և այլ լեզուներով հայտնի «Նախաւետարան Յակոբայ» (Proteuangelium Jakobi) և «Պատմութիւն Թովմայի» (Narratio Thomae) երկերը, որոնք ստեղծվել են I դարի վերջում կամ II դարի սկզբում տարածված ավանդությունների հիման վրա և վերաբերում էին քրիստոնեական կրոնի սկզբնավորմանը: Նրանք հիմք հանդիսացան մնացած բոլոր Տղայության Ավետարանների համար, թարգմանվեցին նաև արաբերեն, պարսկերեն և այլ լեզուների՝ գոյատևելով մինչև ուշ միջնադար⁷:

⁴ Այսպես, Երվանդ Տեր-Մինասյանը ցույց է տալիս, որ նեստորականության դեմ պայքարը Հայաստանում ավարտվեց հաղթանակով արդեն VII դարի վերջերին: Ոչնչացվեց նաև նեստորականության և աղանդավորության կնիքը կրող գրականությունը, չհաշված առանձին հատակոտորների, որոնք փրկվեցին (տե՛ս Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից: Երևան, 1968, էջ 146): Իսկ Մեսրոպ Տեր-Մովսեսյանը մատնանշում է, որ Սամվել Անեցու և Մխիթար Այրիվանեցու ցուցակներում հիշատակված 10 անկանոն գրքերից հայ մատենագրության մեջ պահպանվել են միայն երկուսը՝ «Ադամի ապաշխարութիւնը» և «Մանկութիւն Տեառն», «Իսկ մնացյալները ոչ միայն հայ մատենագրությանը, այլ ընդհանրապես հայտնի չեն» (Тер-Мовсесян М., История перевода Библии на армянский язык. Санкт-Петербург. 1902, с. 251):

⁵ Տե՛ս Անասյան Հ., Հայկական մատենագիտություն. հ. Ա: Երևան, 1959, էջ XXI-XXIII, նաև հ. Բ, Երևան, 1976, էջ 948-949:

⁶ Տե՛ս A. Meher. Erzählung des Thomas հետևյալ հրատարակության մեջ. E. Hennecke. Neutestamentische Apokryphen in Verbindung mit Fachgelehrten in deutschen Übersetzung und mit Einleitungen herausgegeben von Edgar Hennecke. Tübingen und Leipzig, 1904, s. 63.

⁷ Տե՛ս Զարբհանալեան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1883, էջ 193-199, նաև Evangelium Thomae հետևյալ հրատ. մեջ. Realencyklopädie für protestantische Theologie und Kirche. Leipzig, 1896, s. 657.

Նախավետարանը կամ «Գիրք Տղայութեան Քրիստոսի» անվամբ հայտնի և Տեառնեղբորը՝ Հակոբին վերագրվող Ավետարանը պահպանվել է նաև հայերեն թարգմանությամբ: Այն այլ ձեռագրական պարականոն նյութերի հետ երկու խմբագրությամբ հրատարակեց Եսայի Տայեցին⁸: Ուսումնասիրողների կարծիքով (Ջարբհանալյան, Մառ) հայկական թարգմանությունը շատ է տարբերվում Արևմուտքում տարածված նույն Ավետարանից և, ըստ երևույթին, սերում է ասորական կամ պարսկական բնագրերից⁹:

Սակայն հայկական ձեռագրերում չի պահպանվել կամ մինչ այժմ չի հայտնաբերվել Թովմայի Ավետարանը, որի լրիվ անվանումն է «Իսրայելացի փիլիսոփա Թովմայի Պատմությունը Քրիստոսի մանկության մասին»¹⁰: Որ այն կարող էր ոչնչացված լինել Հայաստանում, շատ հավանական է: Նրանում առավել ցայտուն է ի հայտ գալիս մանիքեականների, նեստորականների և սրանց հաջորդած աղանդավորականների կողմից որդեգրված գնոստիկյան գաղափարախոսությունը, մասնավորապես, Docetism-ը, այսինքն՝ Քրիստոսի երևութականության և նրա աստվածային բնության վերաբերյալ ուսմունքը, նրա մարմնավորման փաստի ժխտումը: Հիսուսը իր հրաշագործություններով և իմաստությամբ, որոնք արտահայտություն են գտնում արդեն մանուկ

⁸ Տե՛ս Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց. Բ.-Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 1-126, էջ 127-235, նաև՝ Март Н., Из летописи поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей, ч. II (Отд. оттиск из "Записок из Вост. Отд. Импер. Рус. Археол. Общества". Том VI, с. 135-228): Ն. Մառը ձեռագրերից քաղված նյութերով լրացրել է Եսայի Տայեցու ձեռագրում բացակայող Տեառնեղբոր Ավետարանի 6 պատմությունները:

⁹ Տե՛ս Ջարբհանալեան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց, էջ 192. Март Н., Из летописи поездки в Армению (Отд. оттиск из "Записок...", V, с. 212).

¹⁰ Թովմայի Ավետարանի հնագույն բնագրերը՝ երկու հունական (ընդարձակ և համառոտ) և մեկ լատիներեն հրատարակեց Տիշենդորֆը (տե՛ս Evangelia Apocrypha ... edidit Constantinus Tischendorf, Lipsiae, Avenarius et Mendelsohn, 1853): Ընդարձակն ունի 19 գլուխ և ընդգրկում է Հիսուսի 5-12 տարեկան հասակում կատարած հրաշագործությունների պատմությունները, համառոտը՝ 11 գլուխ, Հիսուսի 5-ից 8 տարեկանը և լատիներենը՝ մինչև Հիսուսի 8 տարեկանը և պարունակում է 15 գլուխ (տե՛ս նաև Evangelium Thomae հետևյալ հրատարակության մեջ. Realencyklopädie für protestantische Theologie und Kirche, s. 657).

Հունարեն և ընդարձակ խմբագրությունը զուգահեռ ասորերեն և լատիներեն տարբերակներով գերմաներեն թարգմանությամբ տե՛ս E. Hennecke. Neu testamentische Apokryphen: Նաև՝ ռուսերեն լեզվով Евангелие детства "Апокрифы древних христиан". (Москва, 1989) գրքում, էջ 142:

Չշփոթել «Թովմայի Ավետարանի» և «Գիրք Թովմայի» 1945 թ. Նագ-Խամմադիում (Եգիպտոս) հայտնաբերված երկերի հետ: Սրանց մասին տե՛ս Трофимова М. К., Историо-философские вопросы гностицизма. Москва, 1979, հատկապես էջ 59-98, 122-141, նաև նույնի՝ Гностические апокрифы из Наг-Хаммади, հետևյալ հրատարակության մեջ. Апокрифы древних христиан, էջ 250-262: Թեև Թովմա Իսրայելացու Տղայության Ավետարանը նույնպես համարվում է գնոստիկյան, սակայն այն իր բնույթով տարբերվում է վերը հիշատակված Նագ-Համմադյան Թովմայի անունը կրող երկու երկերից: Սրանցում ներկայացված է Հիսուսի ուսմունքը գնոստիկյան տեսանկյունից, իսկ Թովմա Իսրայելացու Ավետարանում՝ Հիսուսի մանկության տարիների պատմությունը և այդ տարիներին նրա կատարած հրաշագործությունների միջոցով գնոստիկյան հիմնական գաղափարի հաստատումը:

հասակում, ապացուցում է, որ ինքը չի պատկանում այս աշխարհին¹¹: Այս բնույթն ունեն նաև Հիսուսի Տղայությանը նվիրված Ավետարանները: Սակայն թովմայի Ավետարանն ունի ևս մի առանձնահատկություն. այն տարբերվում է մնացած բոլորից Հիսուսի կերպարի կերտման ռեալիստական բնույթով: Մանուկ Քրիստոսի բնավորությունը աչքի է ընկնում արտակարգ խստությամբ և դաժանությամբ: Նա մերժավորի հանդեպ սեր չի քարոզում և հրաշագործ բարերարի դերում հանդես չի գալիս, այլ ներկայանում է որպես մի տղա, որն իրեն շրջապատող երեխաների հանդեպ ոչ միայն խիստ է, այլ հաճախ նաև դաժան: Օժտված լինելով երկնային ուժով, նա այդ ուժը գործադրում է պատժելու համար բոլոր նրանց, ովքեր չեն ընդունում նրա աստվածությունը: Ջրույցներից մեկում պատմվում է մի երեխայի մասին, որին հինգ տարեկան Հիսուսը չորացնում է այն բանի համար, որ նա բաց էր թողել իր կողմից փոսում հավաքած ջուրը¹²: Մեկ ուրիշում, թե ինչպես, երբ յոթ տարեկան Հիսուսը անցնում էր գյուղով, մի տղա ետևից վազելիս, հրում է նրան: Հիսուսը՝ դառնալով երեխային, անիծում է սրան՝ ասելով. «Դու քո ճանապարհի վերջին չես հասնի»: Երեխան տապալվում է գետնին և մահանում: Հովսեփի և Մարիամի մոտ բողոքով եկած երեխայի ծնողները կուրացվում են Հիսուսի կողմից¹³:

Հիսուսի այդ նկարագիրը շատ հեռու է կանոնական և նույնիսկ պարականոններում ներկայացված Քրիստոսից, և պարզ է, որ չէր կարող լայն տարածում ունենալ¹⁴:

Ասենք նաև, որ թովմայի Ավետարանը և «Գիրք Տղայութեան Քրիստոսի» առնչվում են միմյանց հետ¹⁵, և առաջինի գրույցների հայ բանահյուսության թափանցման ճանապարհներից մեկն էլ եղել է Տղայության կամ Մանկության Ավետարանը: Այս վերջինի հայերեն թարգմանության 28 գլուխներից առաջին 15-ը նվիրված են Մարիամի ծննդյան և մանկության, ապա Հիսուսի ծննդյան պատմություններին, իսկ 16-րդ գլխից՝ Հիսուսի մանկությանը՝ մինչև 18 տարեկան հասակը կատարած հրաշագործությունների պատմություններին: Եվ այս մասում հանդիպում են մի շարք գրույցներ, առնվազն 5-6, որոնց գուգահեռները կան նաև թովմայի Ավետարանում:

Այդ գրույցներից երկուսը՝ Հիսուսը հյուսն և Հիսուսը ներկարար, անցել է նաև հայկական գրույցների մեջ¹⁶: Համեմատելով այդ պարականոնների

¹¹ Տե՛ս Երվանդ Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Գ. Գնոստիկականություն, էջ 17-21, նաև Եզնիկ Ծ. վարդապետ, Հայրաբանություն, Ա, էջ 234, 242-244, Ս. Էջմիածին, 1996:

¹² Տե՛ս «Апокрифы древних христиан» գրքում, գրույց III, էջ 142:

¹³ Տե՛ս անդ, գրույցներ IV, V, էջ 142-143:

¹⁴ Ռուս հանրաճանաչ գիտնական Մ. Ն. Սպերանսկին Թովմայի Ավետարանում Հիսուսի կերպարի այդ դաժան նկարագրով է բացատրում այն փաստը, որ հիշյալ Ավետարանը, ի տարբերություն այլ պարականոնների, շատ հազվադեպ է հանդիպում (տե՛ս Пыпин А. Н., История русской литературы, т. I, Санкт-Петербург, 1902, էջ 421):

¹⁵ Տե՛ս Զարբհանալեան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց, էջ 193:

¹⁶ Հմմտ. Ես. Տայեցու հրատ. Գիրք տղայութեան Քրիստոսի (Թանգարանի հ. Բ.), գլ. Ի, ԻԱ, «Апокрифы...», Евангелие детства, գրույց XIII, Հիսուսը հյուսն, նաև «Henecke Neutestamentische Apokryphen...», գրույց XIII, «Апокриф»-ներում բացակայում է ներկարարի մասին գրույցը: 801-ի 6, 7, ապա 3, 4, 5 գրույցների հետ:

համապատասխան գրույցները Ավանդապատումում հրատարակվածների հետ, գալիս ենք այն եզրակացության, որ նրանց համար աղբյուր է ծառայել Հակոբի Գիրք Տղայության գրույցների խմբագրությունը:

Սակայն հայկական գրույցներում թեև շատ սակավ, ըստ մեզ, հանդիպում են նաև թոմայի Ավետարանից հայ բանահյուսության անցած և տեղայնացած գրույցներ: Դրանք երկու տիպի են. 1) այնպիսիները, որոնք վերաբերում են անմիջապես Հիսուսին, և 2) ուր Հիսուսի մասին գրույցը վերագրվել է հայ ականավոր անձնավորությանը:

Հիսուսի կերպարը ընդօրինակման աղբյուր է հանդիսացել և հերոսին սրբացնելու միջոց հատկապես վարքա-վկայաբանական գրականության մեջ: Եվ դա առաջին հերթին կապվում է Գրիգոր Նարեկացու վարքի հետ, նրա անձի շուրջ ստեղծվել են բազմաթիվ գրույցներ:

Նարեկացու վարքը, ինչպես և գրույցները մանրագնին և լուրջ քննության է ենթարկել նարեկացիագետ Պողոս Խաչատրյանը: Լրացնելով Ղանալանյանի՝ Նարեկացուն վերաբերող գրույցների հավաքածուն, նա ցույց տվեց, որ արդեն XIII դարում կար Նարեկացուն նվիրված հրաշապատումների գրանցված մի շարք¹⁷: Ահա այդ գրույցների մեծ մասում գերբնական ուժով օժտված Նարեկացին, Քրիստոսի նմանությամբ, մեկ հանդես է գալիս հովվի, մեկ՝ պարտիզպանի դերում: Շատ բան այստեղ գալիս է կանոնական Ավետարաններից կամ Ուղղափառ Եկեղեցու կողմից ընդունված պարականոններից, սակայն կան մի երկու գրույց, որոնք, ինչպես ասացինք, կրում են իրենց վրա թոմայի Ավետարանի գրույցների կնիքը:

Կանգ առնենք հատկապես մեկի վրա: Մենք ի նկատի ունենք Գրիգոր Նարեկացու կողմից աղավնիների կենդանացման մասին գրույցը, որն անցել է նաև նրա վարքի Ծերենցյան խմբագրության մեջ:

Ջրույցի սկզբում ասվում է, որ Նարեկացին ջանքեր էր գործադրում ծուլերի և մարմնասեր առաջնորդների կողմից անփութության մատնված Սուրբ Եկեղեցու կարգերը հաստատել և վերստին նորոգել: Այդ պատճառով նրան հայիոյում էին բիրտ և սոպո մարդիկ և համբավում էին ծայթ, այսինքն՝ աղանդավոր: Ապա եպիսկոպոսները և իշխանները, ազատների և տանուտերների հետ, հավաքվում են և, ինչպես ասվում է գրույցում՝ «յդեալ կոչեցին զնա առ ի դատել և յանդիմանել հրապարակաւ և աքսորել զնա պատուհասիւ որպէս զհերձուածօղ: Եւ եկեալ առ սուրբն հրաւիրեալքն, զի տարցեն զնա: Իսկ սուրբն՝ գիտացեալ զխորհուրդս նոցա, կամեցաւ յանդիմանել զանմտութիւն նոցա: Ասաց.

— Նախ կերիցուք հաց և ապա գնացուք:

Եւ ետ տապակել երկու աղաւնիս: Եւ բերեալ եղ առաջի նոցա սեղան, որպէս զի կերիցեն: Եւ օրն այն ուրբաթ էր: Ընդ որ ևս առաւել գայթակղեցան հրաւիրեալքն և ասեն.

— Ո՞չ է օրս ուրբաթ:

Եւ նա, իբրև յանգետս եղեալ, ասաց.

— Թողութիւն արարէք, եղբարք. ես ոչ գիտացի, թէ պահս է օրս այս:

Յայնժամ ասէ ցտապակեալ աղաւնիսն.

¹⁷ Տե՛ս Խաչատրյան Պ., Նարեկացին և հայ միջնադարը. Բանասիր. գիտ. դոկտ. գիտ. աստիճանի հայցման ատենախոսության Սեղմագիր: Երևան, 1993, էջ 20-22:

— Արիք գնացեք ի տեղիս ձեր և յերամս՝ զի պահս է օրս այս:

Եւ նոյն ժամայն ընդ ասել սրբոյն՝ կենդանացան աղանիքն և թևս առեալ թռեան առաջի ամենեցուն: Եւ տեսեալ զգարմանալի սքանչելիսն, որ եղեն, ապուշ մնացին. և յարուցեալ անկան յոտս նորա և երկիրպագին և թողութիւն անձանց հայցէին և Աստուծոյ փառս տային: Եւ գնացեալ պատմեցին զհրաշն, որ եղև, և նոքա լռեցին ի չար խորհրդոցն և անուանեցին զնա երկրորդ Լուսաւորիչ և երկրորդ Սքանչելագործ»¹⁸:

Այժմ բերենք Թովմայի Ավետարանի երկրորդ գրույցը:

«Երբ Հիսուս մանուկը հինգ տարեկան էր, նա խաղում էր առվակի ծանծաղուտի մոտ և ջրափոսի մեջ էր հավաքում ջուրը: Իր մի խոսքով նա դարձրեց այն զուլալ: Եվ փափկացրեց կավը ու ծեփեց 12 ճնճղուկ: Եվ շաբաթ օր էր, երբ նա արեց: Այնտեղ կային շատ երեխաներ, որոնք խաղում էին նրա հետ:

Բայց երբ ինչ-որ եբրայեցի տեսավ, թե ինչ է անում խաղալով Հիսուսը, նա անմիջապես գնաց նրա հոր՝ Հովսեփի մոտ և ասաց:

— Նայիր, քո որդին ծանծաղուտում է և պղծեց շաբաթ օրը:

Երբ Հովսեփը գնաց այնտեղ և տեսավ (Հիսուսին), նա բղավեց:

— Ինչո՞ւ ես անում շաբաթ օրն այն, ինչը չպետք է անես:

Իսկ Հիսուսը՝ ափն ափին խփեց և դիմեց ճնճղուկներին:

— Թռե՛ք:

Եվ ճնճղուկները ճլվլալով թռան-գնացին:

Եբրայեցիները զարմացան տեսնելով այդ, գնացին ու պատմեցին ավագներին, որ տեսան, թե ինչպես Հիսուսը կատարեց իր ասածը»¹⁹:

Ինչպես տեսնում ենք, և՛ Հիսուսը, և՛ Նարեկացին կենդանացնում են թռչուններին: Մեկը ծեփում է ճնճղուկներ հրեաների հանգստյան՝ շաբաթ օրը, մյուսը աղավնիներ է տապակում ուրբաթ՝ հայերի պասի օրը, և ցանկանում հյուրասիրել իրեն այցելության եկածներին: Երկուսն էլ անթույլատրելի գործ են անում արգելված ժամանակ: Երկուսն էլ պարսավանքից հետո ափն ափին են խփում ու կենդանացնում թռչուններին: Դրանով հաստատվում է նրանց սրբությունը և գերբնական աստվածային էությունը:

Այստեղ պարզորոշ կարելի է ասել, որ պարականոնի գրույցը գրեթե անփոփոխ տեղայնացել է և կապվել Գրիգոր Նարեկացու անվան հետ:

Մեկ այլ գրույց, որը նույնպես անցել է Գրիգոր Նարեկացու վարքի իսլաթյան խմբագրություն, կապված է Նարեկացու գերեզմանի հրաշագործ ուժի հաստատման հետ, որի շնորհիվ կենդանանում է թուխսը իր ճտերով²⁰: Թվում է, թե սրա հիմքում ևս ընկած է եղել նույն պարականոն գրույցը:

Եթե մեր բերած այս գրույցները, հատկապես առաջինը, կարելի է համարել Թովմայի Ավետարանի անմիջական փոխառության հետևանք, ապա սրանց հետ մեկտեղ պետք է մատնանշենք մի երկու գրույց՝ կապված հենց

¹⁸ Յայսմաւուրք, 28 փետրվարի: Կ. Պոլիս, 1730 թ.:

¹⁹ Թարգմանությունը ռուսերենից (Анокрефы древних хрестован, էջ 142, գրույց II) համեմատվել է նաև Տիշենդորֆի հրատարակած հունարեն խմբագրության հետ: Հնորիակալություն ենք հայտնում Օ. Վարդապարյանին՝ Տիշենդորֆի հրատարակածը մեզ տրամադրելու համար:

²⁰ Տե՛ս Յայսմաւուրք, 27 փետրվարի:

Քրիստոսի անվան հետ, որոնք իրենց բնույթով են համահունչ Թովմայի զրույցներին: Նրանցում Քրիստոսի կերպարը աչքի է ընկնում նույն դաժանությամբ և խստությամբ: Դրանք են Ավանդապատումի հմր. 801-ի 8-րդ, ապա 13-րդ, 14-րդ զրույցները: Առաջինում ասվում է. «Երբ Քրիստոսը անցնում էր ճանապարհով, բոլորը գնում են նրան տեսնելու, բացի ջուլհակից, որն ասում է. «Այս էլ վերջացնեմ՝ հետո, այս էլ՝ հետո»: Այդպես շարունակվում է մինչև Քրիստոսի հեռանալը: Հիսուսը տեսնելով, որ ջուլհակը չի եկել՝ անիծում է նրան, ասելով. «Ինչքան աշխատես, կուշտ չուտես»»:

Երկրորդ զրույցում Քրիստոսը հանդես է գալիս հարկահանի դերում, նա երեխաներից տասանորդ (հարկ) էր հավաքում: Մի կին, որ տասը երեխա ուներ, մի քանիսին թաքցնում է, որ տասանորդ չվճարի: Քրիստոսը գալիս է այս կնոջ մոտ: Վերջինս ցույց է տալիս իր երեխաներին: Հիսուսը հարցնում է.

— Էլ որդիք չունե՞ս:

— Չէ, - պատասխանում է կինը:

Քրիստոսը լուռ հեռանում է:

Կինը գնում, բաց է անում պահարանը, որտեղ թաքցրել էր իր երեխաներին, սակայն ոչ մեկին չի գտնում, բոլորը դարձել էին Չաչանք (քաջքեր-բարի հոգիներ):

Կա այս զրույցի մի այլ տարբերակ, ուր քահանան է ունենում 40 երեխա և 20-ին թաքցնում է:

Այս վերջին զրույցների զուգահեռները չեն հանդիպում Թովմայի Ավետարանի խմբագրություններում և չի կարելի պնդել, որ նրանք գալիս են այդ Ավետարանից, սակայն վստահորեն կարելի է ասել, որ նրանք նույն միջավայրի և նույն տիպի աղբյուրներից ծնած և տեղայնացած զրույցներ են:

Ամփոփելով մեր խոսքը, կարող ենք ասել, որ Քրիստոսի Տղայության Ավետարանը, այդ թվում և Թովմայի, որոշակի հետք են թողել հայկական զրույցների վրա: Նրանք ոչ միայն ներշնչման աղբյուր են հանդիսացել կանոնական Ավետարանների՝ Քրիստոսի տղայության պատմության պակասը լրացնելու, այլ նաև ինքնուրույն հայկական զրույցներ ստեղծելու համար: